

"Մելլաթ Բանկ" ՓԲԸ-ն, Բանկի կողմից ընդունելի ընկերությունների /ՅՅ պետական հաստատությունների/ և այլ ընդունելի ընկերությունների աշխատակիցներին տրամադրում է սպառողական վարկեր հետևյալ պայմաններով`

Վարկի պայմանները

Արժույթ	ՀՀ դրամ
Տարեկան անվանական տոկոսադրույք	12-16%
Վարկի առավելագույն ժամկետ	24 ամիս
Վարկի առավելագույն գումար	3,000,000 ՀՀ դրամ, ոչ ավել քան աշխատավարձի հնգապատիկը
Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, անկանխիկ
Մարման եղանակ	Ամսական մարումներ` Անուիտետային կամ զսպանակած
Վարկի նվազագույն գումար	100,000 ՀՀ դրամ
Վարկի նվազագույն ժամկետ	3 ամիս

Բանկի միջնորդավճարներ

Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար	Վարկի գումարի 1 տոկոսի չափով, նվազագույնը 10.000 ՀՀ դրամ
	Վարկի գումարի` հաշվից կանխիկ ստացման դեպքում - գանձվում է կանխիկացման վճար` վարկի գումարի 0.35% չափով

Ապահովվածություն

Ապահովվածություն	Վարկառուի դրամական հոսքերը և տվյալ կազմակերպությունում աշխատող առնվազն մեկ անձի երաշխավորություն
	Առանց երաշխավորության` վարկառուի ֆինանսական հոսքի հիման վրա կարող է տրամադրվել առավելագույնը 1 ամսվա աշխատավարձ

Տույժեր

Ժամկետանց վարկ	ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի տարեկան 12% տոկոսի հաշվարկով
Ժամկետանց տոկոս	ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի տարեկան 12% տոկոսի հաշվարկով
Վաղաժամկետ մարման տույժ	Չի հաշվարկվում

Սպառողական վարկերի ձևակերպման վայրը բանկն է:

Սպառողական նպատակով տրամադրվող վարկերը տրամադրվում են փաստաթղթավորված հիմնավորված եկամուտ ունեցող ռեզիդենտ ֆիզիկական անձանց` ՀՀ պետական հաստատությունների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ Կենտրոնական բանկի մասնակցությամբ գործող կազմակերպությունների և Բանկի կողմից ընդունելի կազմակերպությունների աշխատակիցներին:

2. Բանկի կողմից ընդունելի կազմակերպություններ են համարվում այն կազմակերպությունները, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներին միաժամանակ`

- 2.1. հանդիսանում են բանկի հաճախորդ,
- 2.2. գործում են նվազագույնը 2 տարի,
- 2.3. վերջին երկու տարում չունեն դասակարգված պարտավորություններ,
- 2.4. նախորդ հաշվետու ժամանակաշրջանում աշխատել են շահույթով

Վարկատուն ապահովված է աշխատանքով, որը հավաստվում է աշխատանքի վայրից համապատասխան տեղեկանքով /հաճախորդի աշխատանքային ստաժը վերջին աշխատավայրում պետք է կազմի նվազագույնը 12 ամիս/: Ընդ որում աշխատանքի վայրից ներկայացված տեղեկանքում պետք է լինի նշում այն մասին, որ ընկերությունը պարտավորվում է աշխատակցի աշխատանքից ազատվելու դեպքում պարտադիր տեղեկացնել Բանկին:

Վարկառուի բոլոր վարկերի գծով ամսական վճարումները / ամսական զուտ եկամուտ հարաբերակցությունը չպետք է գերազանցի 70 տոկոսը:

Վարկառուի վարկային պատմության նկատմամբ պահանջներ

Գործող ժամկետանց վարկային պարտավորությունների բացակայություն,

Վերջին 3 տարիների ընթացքում դասակարգված վարկային պարտավորությունների բացակայություն:

Երաշխավորին ներկայացվող պահանջները

1.Վարկային պատմության նկատմամբ պահանջներ

Երաշխավորը չունի ժամկետանց պարտավորություններ, վերջին երեք տարիների ընթացքում ունեցել է դրական վարկային պատմություն:

2. Այլ

Սույն պայմանների շրջանակներում երաշխավորը կարող է տրամադրել ընդամենը 1 (Մեկ) երաշխավորություն, ընդ որում փոխադարձ երաշխավորություն չի ընդունվում:

Երաշխավորը պետք է հանդիսանա նույն կազմակերպության աշխատակից:

Պահանջվող փաստաթղթերի ցանկ

1.Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ,

2.Վարկառուի աշխատանքի վայրից տեղեկանք՝ աշխատավարձի չափը և գրանցման ամսաթիվը պարտադիր է,

3.Հանրային ծառայությունների համարանիշ,

4.Այն դեպքում, երբ պահանջվում է երաշխավորություն, ներկայացվում է երաշխավորի անձը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի վայրից տեղեկանք:

3. Վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետը վերջնական փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը որոշման մասին հաճախորդին տեղեկացնում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը վարկառուին տրամադրվում է պայմանագրով նախատեսված ապահովման պայմանագրերի կնքված լինելու դեպքում:

Վարկի տրամադրման դրական կամ բացասական որոշման կայացման վրա ազդող գործոնները՝

վարկային պատմությունը

վարկառուի կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը

համապատասխանությունը ծրագրի պահանջներին

վարկառուի վարկունակությունը

այլ գործոններ

Տոկոսագումարի հաշվարկման կարգ

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ ԵՍՏՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ ԵՍՏՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ՝ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՏՍԱՅԻ ՄԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՎԱՐԿԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՐՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄԲ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ:

Օրինակ

Վարկի մնացորդ՝ 1.000.000 ՀՀ դրամ

Վարկի տարեկան տոկոսադրույք՝ 15 %

Օրական տոկոսագումարի հաշվարկ՝ $1.000.000 * 15\% / 365 = 410.96$

Տրամադրված վարկերի համար անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում:

Փաստացի տոկոսադրույքի հաշվարկ

Համաձայն “Սպառողական կրեդիտավորման մասին “ ՀՀ օրենքի, հաշվարկվում է նաև տարեկան փաստացի տոկոսադրույք՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված հետևյալ բանաձևով

որտեղ՝

i- տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը).

n - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը.

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.

Dn -կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի

կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1 + i)^{\frac{D_n}{365}}}$$

Օրինակ. Տրամադրվել է սպառողական վարկ 500.000դրամի չափով,20տոկոս տարեկան տոկոսադրույքով , 1տարի մարման ժամկետով, մարումները ամենամսյա հավասարաչափ մարումներ՝ վարկ և տոկոս ամսեկան միևնույն գումարը : Փաստացի տարեկան տոկոսադրույքը այս դեպքում կազմում է 21.94%:

ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Վարկառուի կողմից Վարկառուի վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում , բանկը իրավասու է բռնագանձում տարածել վարկառուի գույքի վրա:

ՉԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:ՁԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ:

Տեղեկացում.

“Մելլաթ Բանկ” ՓԲԸ-ն նախքան վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները կանոնակարգ 8/05-ի: